

ԱՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐԺ ԶՕՐ ԺՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ

Բ Ե Թ Ղ Ե Հ Է Մ Ի Ս Ո Ի Ր Բ Ա Յ Ր Է Ն

Ժ Ո Ղ Ո Վ Ո Ի Ր Դ Հ Ա Յ Ո Յ

ՈՐ ՅԵՐՈՒՍԱԼԷՄ, Ի ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ Ի ՍՓԻՒՌՍ ԱՇԽԱՐՀԻ

Կը խօսիմ ձեզի նորէն, աշխարհի ամենանուիրական սրբա-
վայրէն, Բեթղեհէմի մեր Տիրոջ Ծննդեան Այրէն, փոխանցելու
փաղցր աւետիսը այս գիշերուան՝ որ երկու հազար տարիներ առաջ
աշխարհին տրուեցաւ հրեշտակներու և հովիւներու բերնով, ծննդ-
եան բոցավառ աստղին ներքեւ:

Յիսուսի ծնունդը սրտառուչ դրուագ մը չէ միայն, կամ
փերքուած մը գողտր ու անշամանդաղ, նման ծագող արշալոյսին,
որ պէտք է չունի ականջը շանքող, միտքը բարուրող և երևակայու-
թիւնը կրակոյ բառերու: Անկէա անսօզ նշմարտութիւնն է, մերկ
մանուկի մը կեքպարանով պառկած մտորին խորը: Աւելին՝ ըս-
կիզբը նոր կարգի մը՝ մարդկային կեանքին մէջ:

Այս գիշեր նորէն կը բացուի երկնքին արգանդը, ծնելու հա-
մար կեանքի Բանը, ներմակ ծաղիկի մը նման աշխարհի մութերուն
բացուած, և գուարք երգի մը պէս օրերու շրթունքին, որոնք այս
ծնունդէն կ'առնեն իրենց իմաստը:

Առանց մանկութեան, այսինքն անմեղութեան, կարելի չէ
աստղաւորել ցեխի կայսրութիւնը եղող այս աշխարհը: Ծնունդնե-
րը վերէն իջնող երազներ են, որոնք իրենց ծիրանի գօտին կը կա-
մարեն մարդոց անդռինն ու ցաւին վերք: Առանց այս շնորհնե-
րուն, օրերն ու տարիները միահեծան սաղաւարտներ են, մահուան
շուփերով խանձարուրուած: Վերտղայանալ, մոռնալ տարիները որ
մեզ գերեզմանին կը տանին, մոռնալ մարդկային հպարտութիւնը,
իմաստութեան ունայնութիւնը, տգեղութիւնները կեանքին և ըզ-
գալ ինքզինքը անմեղ ու բարի, նման խանձարուր փակող մանկան,
մեծագոյն հեշտանքն է բոլոր անոնց՝ որոնց հոգին սկսեր է սևնալ
տարիներու մուրէն, և որոնց շրթները անկարող են այլևս երկինքի
բոցէն կիզուելու:

Մանուկը որ այսօր վերստին կը ծնի մեր հոգիներուն մէջ,
խորհուրդն ու մարմնառութիւնն է խաղաղութեան և սիրոյ: Խա-
ղաղութիւնը ըզձանքն ու կարծօնն է եղած դարերով տառապող սե-
րունդներուն: Այդ աղերսարկու հիշք այսօր աւելի քան շատցած ու
բարձրացած է, կեանքի անհամաչափ և տրտում գնացքին համըն-
թաց, և դարձեր է սուր ու ցաւագին աղաղակ մը միլիոններու հո-
գիէն բխող: Հակառակ այս իրողութեան, պատերազմի կիրքը
մարդերու մէջ մարելէ շատ հեռու է: Կեանքը ի վերջոյ խաղաղու-
թեան իդձերու և ռազմաշունչ կիրքի խառնուրդ մըն է, և այս իրո-

դուքեան մէջ է թերևս իր ողբերգական գեղեցկութիւնը: Անարիւն պատերազմին, այսինքն կենդանի խաղաղութեան պէտք է երթայ մարդկութիւնը, յամբ բայց ամուր գնացով:

Ուրախալի է հաստատել թէ, անսովոր համեմատութեամբ հետզհետէ կ'անի թիւը անոնց՝ որոնց մէջ կ'ապրի խաղաղութեամբ և արդարութեամբ լի թագաւորութեան մը երազը: Մեր ժամանակներու նշանն է այս և աննշան չէ սփոփանքը՝ զոր անիկա կուտայ սիրտերուն:

Հայ ժողովուրդը դարերով խաղաղութեան ծառան ու իդան է ունեցեր, ազատութեան տենչանքին չափ բուռն և երկնքին չափ խորունկ: Մեզի պարտադրուած պայմաններու արգասիքը չէ միայն պատնաւը այս ըզաւորութեան, այլ որովհետև մենք հաւատացած ենք թէ խաղաղութեան, սիրոյ և համերաշխութեան աշխարհի մէջ միայն կարելի է իրագործել Աստուծոյ թագաւորութիւնը և լեցնել մարդուն կարօտը:

Յիսուսի ծնունդը, մարդուն և Աստուծոյ երջանիկ հանդիպման, այսինքն կորսուած որդիին և Հօրը վերագիտին տօնն է, ոսկի օղակը երկնքի և երկրի: Մանուկը որ կուգար իրեն իբրև օրօրոց ընտրելու բովանդակ աշխարհը, մարմնացած սէրն էր, աշխարհը տաքցնող հոգին, որ կը բանար երկնքի սիրտը և մարդուն արգանդը, սփռելի և նոր խորհուրդով մը: Առանց այս վերնաշխարհէն եկած լոյսին և երազին, մարդը կեանքի այս փռոսին մէջ հարկադրաբար պիտի իյնար լուծումներու ամենէն յոռեգոյնին, յուսահատ ու սև, և պիտի մտնէր շարքին մէջ հաստ և մութ իրերուն, լոյսին դէմ անթափանց, որոնք կեանքի ստորին սանդղամատերը են կազմեն:

Աշխարհը պէտք ունէր այդ Հոգիին, այս գիշեր մարմին առնող այդ Սուրբ Հոգիին, որ կրակի պիտի վերածէր մեր կար, պղտոր ու գունատ մեր խորհուրդներուն պարզեւելու ստեղծումի սուրբ հրաշքը: Հոգին որ չի գար մեզի այս աշխարհի ուժերէն, որ յաւերժական ժայթքն ու բխումն է լոյսի և սիրոյ, որ մեզի կը բռնէ հաւաստիքը որ մարդուն տրուած է այլևս իր կեանքը այլակերպելու, պայծառակերպելու աստուածայինին մէջ և զայն տանելու յաւերժին:

Ժողովուրդ Հայոց որ ի սփիւռս աշխարհի, նուիրական այս գիշերով կեցած Սուրբ Ծննդեան վեհավայրին մէջ, քեզի կը փոխանցենք աւետիսը, որուն հաւատքը քան դարերէ ի վեր կը լեցնէ ու կը գորացնէ մեր քրիստոնէական կեանքը: Այդ աւետիսը, զոր օր մը հովիւներն ու հրեշտակները տուին աշխարհին, տակաւին կ'արձագանգէ կարծես այս սրբազան Այրին խորը: Զայն քեզի կը փոխանցեմ նոյնութեամբ, ժողովուրդ Հայոց, առ և պահէ, իբրև սպեղանի ֆաղցրութեան և պատգամ միօրարութեան բովանդակ կեանքիդ համար: Շարունակէ հաւատալ յաւերժին և մարդուն աստուածացումին, և մայրացուր հոգիդ այս գիշերուան մեծ խորհուրդովը, նման քու պապերուդ՝ որոնք դարեր շարունակ կաւէն ու հողէն վարդեր հանեցին, գեղումի բերելով գիշերները և բանալով դուռները երկնքին, իջեցնելով Աստուծոյ Որդին իրենց սիրտերուն մէջ և մտքի գաղջ ընտանութեան:

Սուրբ Ծնունդ, 1977